ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
ծնողական խորհրդի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

11 սեպտեմբերի 2026 թ.
ք. Գյումրի

Հանդիպմանը մասնակցում էին ծնողական խորհրդի անդամները՝ 27 հոգի:

Օրակարգում՝

1. «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ Հայաստան Հովհաննիսյանի հանդիպումը ծնողական խորհրդի անդամների հետ՝ հաստատության զարգացման ծրագիրը կազմելու նպատակով առաջարկություններ լսելու վերաբերյալ:

Լսեցին՝

«Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ Հայաստան Հովհաննիսյանի հանդիպումը ծնողական խորհրդի անդամների հետ՝ հաստատության զարգացման ծրագիրը կազմելու նպատակով առաջարկություններ լսելու վերաբերյալ:

Հանդիպման սկզբում ներկայացվեց հանդիպման նպատակը: Տնօրենի պաշտոնի հավակնորդ Հայաստան Հովհաննիսյանը ներկայացրեց հաստատության զարգացման ծրագրի մշակման հիմնական ուղղությունների վերաբերյալ իր մոտեցումները և առաջարկեց ծնողական խորհրդի անդամներին ներկայացնել ուսումնադաստիարակչական գործընթացի, դպրոց–ընտանիք համագործակցության, սովորողների կարիքների և դպրոցի հետագա զարգացման վերաբերյալ իրենց դիտարկումներն ու առաջարկությունները:

Արտահայտվեցին՝

Ծնողական խորհրդի անդամները ներկայացրին դպրոցի հետագա զարգացման վերաբերյալ իրենց դիտարկումներն ու առաջարկությունները:

Քննարկման ընթացքում առաջարկվեց՝

- շարունակական ուշադրություն դարձնել կրթության որակի և սովորողների ուսումնական արդյունքների բարելավմանը,
- առավել արդյունավետ կազմակերպել տարբեր կրթական կարիքներ և առաջադիմության տարբեր մակարդակներ ունեցող սովորողների հետ աշխատանքը,
- ամրապնդել դպրոց–ընտանիք համագործակցությունը և ապահովել ծնողների պարբերական իրազեկումը սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի վերաբերյալ,

- բարձրացնել ծնողների մասնակցությունը դպրոցի կրթական, դաստիարակչական և համայնքային նախաձեռնություններին,
- նպաստել սովորողների համար անվտանգ, առողջ և բարենպաստ կրթական միջավայրի շարունակական բարելավմանը,
- ընդլայնել խմբակային, սպորտային, մշակութային և արտադասարանական գործունեության հնարավորությունները,
- առավել հետևողական աշխատանք իրականացնել սովորողների կարգապահության, հաճախումների և ուսման նկատմամբ պատասխանատվության բարձրացման ուղղությամբ,
- ապահովել ծնողների առաջարկությունների և բարձրացված խնդիրների քննարկման ու հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ,
- շարունակաբար բարելավել դպրոցի նյութատեխնիկական պայմանները և ուսումնական գործընթացի կազմակերպման հնարավորությունները:

Հավակնորդ Հայաստան Հովհաննիսյանը լսեց ծնողական խորհրդի անդամների ներկայացրած դիտարկումներն ու առաջարկությունները, պատասխանեց բարձրացված հարցերին և նշեց, որ դրանք կդիտարկվեն հաստատության զարգացման ծրագիրը կազմելիս:

Որոշեցին՝

1. Արձանագրել, որ «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ Հայաստան Հովհաննիսյանիի հանդիպումը հաստատության ծնողական խորհրդի անդամների հետ կայացել է:
2. Արձանագրել հանդիպման ընթացքում ծնողական խորհրդի անդամների կողմից ներկայացված՝ հաստատության զարգացմանն ուղղված առաջարկություններն ու դիտարկումները:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ա. Կարապետյան

Քարտուղար՝ Գ. Գասպարյան